ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17-19-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Արմեն Սիմոնյան
   Վարդան Չիլինգարյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Արմեն Սիմոնյան – ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
   Վարդան Չիլինգարյան – Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության փորձագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2021թ. փետրվարի 17-19,

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների 2021-2023 թվականների Համակարգված տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականացման ճանապարհային քարտեզի գործողությունների ծրագրի շուրջ ծագած տարաձայնությունների վերջնական համաձայնեցման փորձագետների նիստին:
   Նախարարների տեղակալների նիստին քննարկվել են միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների ազատականացմանը վերաբերող, երկաթուղային տրանսպորտի ոլորտում կիրառվող կոնվենցիոն արգելքների ներմուծման և կիարռման ինչպես նաև միության երկրների միջեւ թռիչքներ իրականացնելիս ավիաընկերությունների համար հավասար պայմաններ ապահովելու հարցերը: Այս բոլոր խնդիրները կարևոր են ոլորտային շուկաների ձևավորման և տրանսպորտի ոլորտում ինտեգրացիոն գործընթացների խորացման համար:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Համակարգված տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականացման ճանապարհային քարտեզի չհամաձայնեցված հարցերի քննարկում:

«Ճանապարհային քարտեզի» նախագիծը սահմանում է տրանսպորտի ոլորտում ինտեգրման ոլորտային զարգացման առաջնահերթությունները և այսպիսով նախատեսվում է կատարելագործել մեծածավալ և ծանր տրանսպորտային միջոցների տեղաշարժի վերահսկման մեխանիզմը և սինխրոնիզացնել վտանգավոր բեռների տեղափոխման համար անհրաժեշտ ընթացակարգերը: Քաղաքացիական ավիացիայի ոլորտում աշխատանքները ԵԱՏՄ շրջանակներում բնականոն ընթանում են:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Համակարգված տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականացման ճանապարհային քարտեզի 28-րդ, 41-րդ, 43. 1–րդ, 43. 2–րդ, 44-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ և 54-րդ կետերի քննարկում: (Հանդիպման արձանագրությունը, որը գտնվում է ստորագրման փուլում, կցվում է):

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմվել է Համակարգված տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականացման ճանապարհային քարտեզի քննարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (կցվում է):

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համակարգված տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականացման ճանապարհային քարտեզի 43. 1–րդ, 43. 2–րդ և 44-րդ կետերի ընդունում:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

22.02.2021

22.02.2021թ.